



«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ  
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ  
ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ  
ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Պրոբլեմային ուսուցման  
մեթոդաբանությունը և կիրառումը առարկայի դասավանդման  
գործընթացում

Առարկան՝ Դասվար

Հետազոտող ուսուցիչ՝ Մխիթարյան Ալինա

Ուսումնական հաստատություն՝ «ՀՀ Արարատի մարզի Մայաթ-  
Նովայի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

Երևան 2022

## Բովանդակություն

Ներածություն .....	3
Գլուխ 1. Պրոբլեմային ուսուցման սաղմերը մանկավարժական մտքի պատմության մեջ և դրա հիմնական հասկացությունները.....	5
1.1 Պրոբլեմային ուսուցման սաղմերը մանկավարժական մտքի պատմության մեջ.....	5
1.2. Պրոբլեմային ուսուցման հասկացությունները.....	7
Գլուխ 2. Պրոբլեմային ուսուցմը որպես դեռահասի ճանաչողական ակտիվության և ինքնուրույնության բարձրացման միջոց.....	12
2.1. Պրոբլեմային ուսուցումը որպես աշակերտի ուսումնական գործունեության կազմակերծման միջոց.....	12
2.2. Պրոբլեմային ուսուցման կազմակերպումը ներառարկայական և միջառարկայական կապերի բացահայտման պայմաններում.....	14
2.3. Պրոբլեմային հարցերը որպես աշակերտների ճանաչողական ակտիվության և ինքնուրույնության բարձրացման միջոց .....	16
Եզրակացություններ և առաջարկություններ.....	18
Օգտագործված գրականության ցանկ .....	20

## Ներածություն

Աշակերտների ակտիվ ստեղծագործական կարողությունների ու հմտությունների զարգացումը, դրանց ձևավորումը ուսուցման ու կրթության համակարգի կարևորագույն հարցեր են: Ահա թե ինչու է պահանջվում մշտապես կատարելագործել ուսուցման պրոցեսի ակտիվացնող մեթոդները, լայնորեն օգտագործել աշակերտների մտավոր հնարավորությունները, նպաստել նրանց ստեղծագործական ինքնուրույնության զարգացմանը: Առաջնահերթություն են ուսուցման ավանդական մեթոդների լիակատար կատարելագործում, նոր մեթոդների հայտնագործում, որոնք կլուծեն երկու իրար փեխկապակցված կարևոր խնդիրներ. Առաջին՝ առավել արդյունավետ դարձնել ուսուցման պրոցեսը և երկրորդ՝ դպրոցականներին սովորեցնել մտավոր գործողությունների նոր եղանակներ: Այս խնդիրների լուծումը հնարավորություն կտա նրանց ինքնուրույնաբար կառավարելու իրենց աշխատանքները, զարգացնելու իրենց տրամաբանական, տեսական մտածողությունը:

Դրանց լուծման կարևորագույն միջոցներից մեկն էլ պրոբլեմային ուսուցումն է: Ժ.Ժ. Ռուսոն պահանջում էր բնական գիտելիքների ուսուցման հիմքում դնել հետազոտական ու որոնողական մեթոդները: Ա.Դիստերվեգը գրում է. << Իսկական ուսուցիչն իր աշակերտին ցույց է տալիս ոչ թե պատրաստի շենքը, որի մեջ դրված է հազարամյակների աշխատանք, այլ նրան դրդում է աղյուսներ շարել, իր հետ միասին կառուցել շենքը, նրան կառուցել է սովորեցնում >>:

Ժամանակակից դիդակտիկան զարգացնող ուսուցման գլխավոր միջոցներից մեկն էլ համարվում է պրոբլեմային ուսուցումը: Այս աշխատանքում փորձ է արվել ցույց տալ պրոբլեմային ուսուցման դերն ու նշանակությունը աշակերտների ինքնուրույնության և ստեղծագործական ակտիվության ձևավորման գործում, բացահայտել ու բնութագրել պրոբլեմային ուսուցման մի քանի առանձնահատկություններ, այդ եղանակով ուսումնական զանազան խնդիրներ լուծելու, առաջադրանքներ կատարելու, պրոբլեմային իրավիճակներ ստեղծելու և հաղթահարելու հնարավոր միջոցներն ու ձևերը, ինչպես նաև վեր հանել դրանց կրթադաստիրակչական նշանակությունը:

Փորձ է արվել ներկայացնել ուսուցման պրոցեսում դեռահասի ինքնուրույնության, հատկապես ակտիվ ստեղծագործական կարողությունների զարգացման խնդիրները, նպատակները և դրա կենսագործմանը նպաստող մեթոդակա բազմազան ձևերն ու եղանակները:

Աշխատանքի ընթացքում օգտվել եմ հետևյալ աղբյուրներից՝ Յո.Ա. Ամիրջանյան – Պրոբլեմային իրավիճակները ուսուցման պրոցեսի ակտիվացման միջոցներ, Ի.Դ. Անդրեև - Գիտական ճանաչողության մեթոդների մասին, Լ.Գ. Վյատկին – պրոբլեմային ուսուցման մեթոդիկան, Ի.Տ. Ինդիյան – Ուսուցման մեթոդիկա, Գ.Գ. Քարամյան – Դասերի կատարելագործման հարցերը, Վ.Ն. Մաքսիմովա – Ուսուցման նկատմամբ պրոբլեմային մոտեցումը դպրոցում, Ա.Ս. Մատյուշկին – Ուսուցման և մտածողության մեջ պրոբլեմային իրավիճակները, Մ.Ի. Մախմուտով – Պրոբլեմային ուսուցումը, Մ.Ի. Մախմուտով – Պրոբլեմային ուսուցման հարցերը դպրոցում, Մ.Ի. Մախմուտով – Պրոբլեմային ուսուցման տեսությունը և պրակտիկան, Մ.Ի. Մախմուտով – Պրոբլեմային ուսուցման գործընթացի կազմակերպման հարցերը, Վ.Պ. Մուրադյան – Ուսուցման գործընթացում հարցերի և առաջադրանքների դերը, Տ.Ի. Շամովա – Ուսուցման մեջ պրոբլեմային մոտեցումը, Լ.Ս. Հովհաննիսյան – Պրոբլեմային ուսուցման մի քանի առանձնահատկությունները:

## **Գլուխ 1. Պրոբլեմային ուսուցման սաղմերը մանկավարժական մտքի պատմության մեջ և դրա հիմնական հասկացությունները**

### **1.1 Պրոբլեմային ուսուցման սաղմերը մանկավարժական մտքի պատմության**

Պրոբլեմային ուսուցման սաղմերը նկատելի են դեռևս հին հունական մանկավարժության մեջ: Հայտնի փիլիսոփա, մանկավարժ Սոկրատեսը զրույցի մեթոդով աշակերտների գիտակցության մեջ արթնացնում էր ձգտումներ՝ հայտնաբերելու ուսումնական խնդրի անհայտը: Առաջադրված հարցերի միջոցով նա կարողանում էր ստեղծել որոնողական լարված իրավիճակ ու դրանով հարկադրել աշակերտներին կատարելու մտքի «մարզանք», գտնել « թաքնվածը», հասնել ճշմարտության: Բուրժուական հարաբերությունների արշալույսին հանդես եկան նոր առաջադեմ անհատներ, ինչպիսինք են՝ Յ.Ա. Կոմենսկին, Ժ.Ժ. Ռոասոն, Հ. Պեստալոցցին, Ա. Դիստերվեզը, ռուս մանկավարժ Յ.Դ. Ուշինսկին և ուրիշներ, որոնք պահանջում էին կատարելագործել ուսուցման ավանդական մեթոդները, զարգացնել աշակերտների ինքնուրույնությունը, բարձրացնել նրանց ստեղծագործական կարողություններն ու հմտությունները:

Սակայն դասական մանկավարժների հայացքները չէին պարունակում պրոբլեմային ուսուցման որոշակի բաղադրիչ մասեր:

Հետագայում ուսուցման օգտակար շատ մեթոդներ, այդ թվում նաև հետազոտական մեթոդը, մուտք գործեցին դպրոց: Դպրոցներում զգալի չափով բարձրացավ լաբորատոր և պրակտիկ պարապմունքների, արտադրական էքսկուրսիաների դերը, մասսայականությունն ստացան դասագրքերի ու գրքերի վրա ինքնուրույնաբար կատարվող աշխատանքի ձևերը, զեկուցումների և ռեֆերատների, կոնֆերանսների (բարձր դասարաններում) կազմակերպումը:

Հետազոտական մեթոդը, ըստ Չ. Ռավկինի, հնարավորություն ընձեռնեց ճանաչողական գործունեությունը մոտեցնել գիտական ճանաչողականությանը, նրա հիմնական մեթոդներին ու փուլերին:

Այդ մեթոդն իր մեջ ներառում էր պրոբլեմային ուսուցման որոշ տարրեր: Սակայն չպետք է հետազոտական մեթոդը շփոթել պրոբլեմային ուսուցման եղանակի հետ:

Ուսուցման պրոբլեմային եղանակի առանձնահատկությունն այն է, որ նրա կիրառման դեպքում իմացությունը հետապնդում է պրոբլեմի լուծման ու պրոբլեմային իրավիճակների հաղթահարման վերջնական նպատակ, որը պահանջում է սովորող

սուբյոկտից պատճառահետևանքային կապերի ճշտում: Պրոբլեմի լուծումը, ստեղծված իրավիճակների հաղթահարումը իրականացվում է հոգեկան և մտավոր մի շարք գործառնությունների միջոցով: Մինչդեռ հետազոտական մեթոդի նպատակն է ուսուցման պրոցեսում կատարել առաջադրանքներ՝ առանց բարդ խնդիրների հակասական հանգույցների լուծման:

Պրոբլեմային ուսուցումը ուսուցման եղանակ է՝ հիմնված գիտելիքների յուրացման օրինաչափությունների, դասավանդման և ուսման մեթոդների յուրակերպ համակցման վրա: Այն որպես պրոբլեմային իրավիճակների տարրերի վերլուծման արդյունք նպատակամղված է հակասությունների հանգույցի լուծմանը և նպաստում սովորողների մտածողության զարգացմանը, բաժրացնում նրանց ճանաչողական հետաքրքրությունը՝ առաջացնում ձգտում նորը, անհայտը հայտնի գիտափաստերի միջոցով բացահայտելուն:

Պրոբլեմային ուսուցումը ունի մի շարք հասկացություններ:

## 1.2. Պրոբլեմային ուսուցման հասկացությունը

Պրոբլեմային ուսուցման հասկացություններից են պրոբլեմային շարադրանքը, ուսումնական պրոբլեմը, պրոբլեմային հարցը, պրոբլեմային իրավիճակը:

**Պրոբլեմային շարադրանք** - Պրոբլեմային շարադրանքը ուսուցման այն գլխավոր ձևերից է, որի միջոցով հնարավոր է զարգացնել սովորողների գիտահետազոտական, որոնողական և ընդհանրապես նրանց մտավոր գործունեության տեսակները:

Պրոբլեմային շարադրանքը սովորական շարադրանքից տարբերվում է նրանով, որ պրոբլեմային շարադրանքի դեպքում ուսուցիչը բացահայտում է անհայտի որոնման ուղիները, ցույց տալիս այն դժվարությունները, որոնք հանդես են գալիս սուբյեկտի մտածողության ընթացքում: Ուսուցիչն իր այս գործողությամբ սովորողներին ցույց է տալիս հետազոտման գործնական ուղիները, տալիս է տրամաբանական մտածողության օրինակ, առանձին հարցերի միջոցով նրանց մասնակից դարձնում գիտական որոնումներին, դասը դարձնում դիմավոր, սովորողների ուշադրությունը բևեռում գիտնականների այնպիսի հայտնագործությունների վրա, որոնք օրինակ կարող են ծառայել նրանց հետագա որոնողական ու հետազոտական գործունեության համար:

Շարադրանքը, ըստ Ն.Գ. Դայրիի, պրոբլեմային է այն դեպքում, երբ այն պարունակում է պարզաբանող հարց: Նման շարադրանքի դեպքում ուսուցիչը խուսափում է երևույթների, փաստերի, իրադարձությունների եռությունը բացատրելուց: Աշակերտները իրենք են կատարում վերլուծությունները, հայտնագործում իրերի, երևույթների, իրադարձությունների ներքին էական կողմերը, իհարկե, ուսուցչի ղեկավարությամբ:

Մ.Ի. Մախմուտովը պրոբլեմային շարադրանքը բաժանում է երեք տեսակի: Առաջին տեսակը համարում է այն շարադրանքը, որի հիմքում ընկած է հարցերի միջոցով կազմակերպված մոնոլոգ շարադրանքը: Վերջինիս եռությունն այն է, որ առաջադրված պրոբլեմների լուծմանն ակտիվորեն մասնակցում են աշակերտները:

Ըստ Մախմուտովի, երկրորդ տեսակի պրոբլեմային շարադրանքն այն է, որի հիմքում ընկած է երկխոսությունը՝ կապված այս կամ այն հասկացության տրամաբանական եռության բացահայտման հետ: Այս դեպքում ուսուցիչը բացատրում է փաստացի կյանքը, սովորողների ուշադրությունը կետրոնացնում նրա վերլուծման վրա: Նման դեպքում սովորողներն ինքնուրույնաբար որոնում են պրոբլեմային հարցի լուծման ուղիներն ու միջոցները, առաջադրում հարցեր, կառուցում վարկածներ: Երրորդ տեսակի պրոբլեմային շարադրանքը պրոբլեմային ուսուցման կազմակերպման միջոցներից մեկն է, որի ամբողջ եռությունը աշակերտների ճանաչողական ինքնուրույնության ապահովումն է: Վերլուծելով պրոբլեմային իրավիճակների տարրերը, աշակերտներն

իրենք են կամ վերաձևակերպում ուսուցչի կողմից առաջադրված պրոբլեմը, կամ էլ առաջադրում այն և իրենք էլ գտնում դրա լուծման ուղիները:

Պրոբլեմային շարադրանքը այն շարադրանքն է, որը պարունակում է ճանաչողական դժվարություն, հարց կամ խնդիր, որոնք առաջացնում են պրոբլեմային իրավիճակներ, և որոնց հաղթահարման համար սովորողները կատարում են որոնողական, հետազոտական աշխատանքներ, ի հայտ բերում նյութի մեջ եղած հակասությունները: Մ Ն Սկատկինը, բարձր գնահատելով պրոբլեմային շարադրանքի դերը, նշում է, որ ամենից առաջ այն շարադրանքը դարձնում է առավել փաստարկված, իսկ գիտելիքները ավելի իմաստավորված և դրանով նպաստում է գիտելիքները համոզմունքների վերածելուն: Երկրորդ պրոբլեմային շարադրանքը սովորեցնում է մտածել գիտականորեն, աշակերտներին տալիս գիտական որոնման հիմնական օրինակ: Երրորդ՝ պրոբլեմային շարադրանքը միշտ առավել հուզական է, և այդ պատճառով էլ մեծացնում է սովորողների հետաքրքրությունը շարադրվող նյութի նկատմամբ:

Բախման իրավիճակներով, հակասություններով հագեցած դասի շարադրանքն ավելի է բարձրացնում աշակերտների հետաքրքրությունը, քան սովորական միապաղաղ շարադրանքը: Ըստ Ս.Լ. Ռուբինշտեյնի՝ մարդը հիմնականում տիրապետում է նրան, ինչ ինքն է ձեռք բերում սեփական աշխատանքով: Միայն այս դեպքում՝ նա կարող է ձեռք բերել ճանաչողական ընդունակություններ ու կարողություններ, զարգացնել իր տրամաբանական մտածողությունը: Հետևապես, պրոբլեմային ուսուցման ժամանակ գլխավորը ոչ միայն ուսուցչի կողմից ուսումնական պրոբլեմի առաջադրումն է, այլև այդ պրոբլեմի լուծման պրոցեսին աշակերտներին ներգրավելու եղանակների ու մեթոդների հայտնաբերումը, նրանց ակտիվ ինքնուրույն գործողությունների ղեկավարումը:

**Ուսումնական պրոբլեմ** - Ուսումնական պրոբլեմի նպատակն է աշակերտների մեջ արմատավորել հետազոտական հմտություններ, այսինքն՝ առաջադրանքները, խնդիրները ինքնուրույնաբար լուծելու, դրանց մեջ անհայտները հայտնաբերելու կարողություններ: Իհարկե, դասապրոցեսում աշակերտների իրադրությունները " սյուբեկտիվ են, քանի որ դրանք մարդկությանը վաղուց են հայտնի: Սակայն կարևորն այստեղ այն է, որ աշակերտները յուրացնում են իրականության գիտական ճանաչման մեթոդները: Այսպիսով, ուսումնական պրոբլեմը արտացոլում է ուսուցչի և աշակերտի գործունեության հարաբերությունը՝ տրամաբանահոգեբանական հակասությունների լուծման ուղին, նպաստում աշակերտների հետագա որոնողական գործունեության զարգացմանը, նրանց մեջ առաջացնում անհայտի երկությունը բացահայտելու հետաքրքրություն:

. Միևնույն ուսումնական պրոբլեմը կարող է մեկի համար լինել պրոբլեմ, մյուսի համար՝ ոչ:



Ուսումնական պրոբլեմների առաջադրումը մեծ մասամբ կախված է ուսուցչի հմտությունից, առարկայական, մեթոդամանկավարժական պատրաստականությունից, նրա վարպետությունից:

Ուսումնական պրոբլեմի մեջ հիմնական բաղադրամասը պրոբլեմային հարցն է:

**Պրոբլեմային հարց** - Հարցը պրոբլեմային բնույթ է կրում միայն այն դեպքում, երբ նրա նպատակի ու պայմանի համադրման դեպքում նպատակը հանդես է գալիս առաջնային պլանում, երբ այն պարունակում է ինֆորմացիոն կոնֆլիկտ՝ առարկայի, երևույթի առանձին կողմերի ու կապերի մասին: Պրոբլեմային հարցն իր մեջ ներառող այլ հարցերի կոմպլեքս է: Մ.հ. Մախմուտովը պրոբլեմային հարցին ներկայացնում է հետևյալ պահանջները. 1) պրոբլեմային հարցը պետք է կապ ունենա նախկինում յուրացրած իմացությունների, պատկերացումների ու թեմայի հետ, 2) այն պետք է իր մեջ պարունակի ճանաչողական դժվարություն, որի լուծումը ենթադրում է մի շարք մտավոր գործողություններ ( համեմատություն, ընդհանրացում, եզրահանգում, սխտեմավորում և այլն ), 3) ամեն մի պրոբլեմային հարց պետք է կապված լինի սովորողների զգացումների հետ, առաջացնի իմացածի անբավարարություն, նորը հայտնաբերելու ձգտում:

Այդ ամենի հետ պրոբլեմային հարցը պետք է ունենա նաև հետաքրքրություն պատճառող խթան՝ աշակերտների մտավոր նոր գործողությունների մղելու ներքին տրամաբանական ուժ: Սակայն պրոբլեմային հարցն այն ժամանակ կարող է աշակերտների մեջ առաջացնել ակտիվություն, երբ նրանք կունենան պրոբլեմը լուծելու համապատասխան գիտելիքներ: Պրոբլեմային իրավիճակների խելացի ստեղծումը միշտ էլ նպաստում է սովորողների որոնողական ակտիվ գործունեության զարգացմանը ու ստիպում նրանց հայտնաբերելու երևույթների ու առարկաների միջև եղած պատճառահետևանքային կապերը: **պրոբլեմային իրավիճակ** - Պրոբլեմային ուսուցման պրոցեսի կենտրոնական օղակը պրոբլեմային իրավիճակն է: Ըստ Ա.Մ. Մատյուշկինի՝ իրավիճակը պրոբլեմային է համարվում, երբ այն ծագում է պրակտիկ ու տեսական գործունեության պրոցեսում՝ պահանջվող և հայտնի գիտելիքների, գործողության ու մեթոդների անհամապատասխանության դեպքերում: Ուստի, պրոբլեմային իրավիճակի հիմքում ընկած են այն հակասությունները, որոնք հանդես են գալիս սուբյեկտի ( աշակերտի ) և օբյեկտի ( հարցի, խնդրի, պահանջի ) միջև: Ուրեմն, պրոբլեմային իրավիճակը սուբյեկտի և օբյեկտի հարաբերության արդյունքն է:

Ա.Մ. Մատյուշկինը նշում է պրոբլեմային իրավիճակների երեք բաղադրամասեր. ա) ճանաչողական պահանջ, որը մարդու մոտ արթնացնում է բանական գործողություն, բ) գործողության միջոցներ՝ անհայտը հայտնաբերելու համար, գ) մարդու բանական կարողություններ ( ստեղծագործական հնարավորություններ՝ ներառյալ անցյալի փորձը): Այսպիսով, պրոբլեմային իրավիճակի ծագումը կախված է այն բանից, թե ինչ

հարաբերություն կա սուբյեկտի նպատակի ու նրա առկա հնարավորությունների միջև: Հնարավորությունների պակասը պրոբլեմային իրավիճակի առաջացման տեղիք է տալիս: Պրոբլեմային իրավիճակներ ստեղծելու եղանակները բազմաթիվ են: Նշենք դրանցից մի քանիսը:

1. Խնդիր – առաջադրանքի եղանակ: Այս դեպքում պրոբլեմային իրավիճակին նախորդում է խնդիր-առաջադրանքը, որը պարունակում է հակասություն և աշակերտին հարկադրում ստեղծված իրավիճակից դուրս գալու համար կատարել մտավոր մի շարք գործողություններ:

2. Պատճառահետևանքային եղանակ – Այս դեպքում առաջադրանքի հիմքում ընկած է պատճառը կամ հետևանքը: Ուստի, դրանց կապերի բացահայտման միջոցով աշակերտներին հնարավորություն է տրվում դուրս գալու պրոբլեմային իրավիճակից:

3. Դիտողահամեմատական եղանակ – Այս դեպքում պրոբլեմային իրավիճակին նախորդում են պատմական փաստաթղթի, իրադարձության, պատմազնական օբյեկտի շուրջը կատարվող դիտարկումները և համեմատությունները:

Դրանց հիման վրա առաջացած պրոբլեմային իրավիճակներից դուրս գալու համար աշակերտը ստիպված կատարում է զանազան մտավոր գործողություններ:

4. Հակադրության եղանակ – Այս դեպքում պրոբլեմային իրավիճակը ստեղծվում է պատմական իրադարձությունների, փաստերի ու հասկացությունների հակադրման միջոցով: Հակադրվում և զուգակցվում են դրանց իրար նմանվող և իրարից տարբերվող կողմերը, սինթեզվում և լուծվում է պրոբլեմը:

Պրոբլեմային ուսուցման վերաբերյալ գիտամանկավարժական, հոգեբանական գրականության վերլուծությունը, կատարված ուսումնասիրություններն ու փորձարարական աշխատանքները հանգեցնում են հետևյալ եզրակացություններին.

1. Պրոբլեմային ուսուցումը զարգացնող ուսուցման կարևորագույն միջոց է: Այն կարող է մեծ դեր խաղալ աշակերտների համակողմանի և ներդաշնակ զարգացման ու դաստիարակման համար:

2. Պրոբլեմային ուսուցումը առավելագույն չափով կարող է զարգացնել և աշակերտի, և ուսուցչի ստեղծագործական գործունեությունը:

3. Առանց ուսուցչի խելացի ղեկավարության հնարավոր չէ իրականացնել պրոբլեմային ուսուցման բարդ խնդիրները, զարգացնել աշակերտների հետազոտական, որոնողական գործունեությունը, քանի որ պրոբլեմների լուծման և իրավիճակների հաղթահարման ուղիները որոնվում, հայտնաբերվում են ուսուցչի օգնությամբ, նրա կողմից մասնակի կամ օժանդակ պրոբլեմներ առաջադրելու միջոցով:

4. Պրոբլեմային հարցը, խնդիրը կամ առաջադրանքը մտավոր ակտիվություն կարող են առաջացնել միայն որոշակի պայմաններում: Այդպիսի պայմաններ են, օրինակ,

սուբյեկտի և օբյեկտի միջև առաջացած հակասությունները: Վերջիններս էլ որպես գործոններ ակտիվացնում են սուբյեկտի մտածողական գործողությունը:

5. Պրոբլեմային ուսուցումը չպետք է գերազնահատել և ունիվերսալացնել: Այն մեծ և օգտակար դեր կարող է խաղալ ուսուցման այլ մեթոդների հետ զուգակցելու դեպքում:

6. Աշակերտներին պրոբլեմային խնդիրներ, հարցեր ու առաջադրանքներ տալիս, ինչպես և պրոբլեմային իրավիճակների ստեղծման եղանակներ ու կանոններ մշակելիս պետք է հաշվի առնել. ա) աշակերտի բանական կարողությունները, ընդհանրապես, նրանց հոգեբանական առանձնահատկությունները, բ) ուսուցչի դեկավարման վարպետությունն ու արվեստը, գ) ուսուցանվող թեմայի ընձեռնած հնարավորությունները և դ) սովորողների տարիքային առանձնահատկությունները:

7. Պրոբլեմային ուսուցումը սովորողների ուսումնական գործունեության կազմակերպման, նրանց ճանաչողական ակտիվության բարձրացման կարևորագույն միջոց է:

## **Գլուխ 2. Պրոբլեմային ուսուցումը որպես դեռահասի ճանաչողական ակտիվության և ինքնուրույնության բարձրացման միջոց**

### **2.1 Պրոբլեմային ուսուցումը որպես աշակերտի ուսումնական գործունեության կազմակերծման միջոց**

Դպրոցականների մտավոր զարգացումը տեղի է ունենում իր գործունեության շնորհիվ: Առանց գործունեության չկա զարգացում ընդհանրապես: Ուստի, մարդու բարոյական ու ֆիզիկական ուժերը, կյանքի փորձը, վարքի նորմերը կատարելագործվում են միայն ու միայն ակտիվ գործունեության շնորհիվ: Ակտիվ գործունեության շնորհիվ մարդը ճանաչում է աշխարհը և իր գիտակցակա գործունեությամբ ազդում շրջապատի վրա: Դպրոցականի համակողմանի զարգացումն իրականացվում է ուսումնադաստիրակչական աշխատանքի պրոցեսում:

Այսպիսով, սովորողների ստեղծագործական հնարավորությունների, նրանց ընդունակությունների ու կարողությունների զարգացումը բարդ հոգեբանական պրոցես է, որը ենթադրում է սիստեմատիկ ճանաչողական բնույթի, հասարակական արժեք ներկայացնող բազմապիսի գործունեություն:

Աշակերտների ճանաչողական ակտիվությունն ու ինքնուրույնությունը հնարավոր է զարգացնել նաև պրոբլեմային ուսուցման միջոցով: Դա ուսուցման այն եղանակներից է, որը աշակերտներին աշխույժ վեճերի է մղում, նրանց մեջ առաջացնում հակասական կարծիքներ և այդ կարծիքները հաստատող փաստերի որոնման բարդ իրավիճակ: Նման գործունեությունը դրսևորվում է հատկապես դասի ընթացքում:

Աշակերտներին պրոբլեմային առաջադրանքներ կարելի է հանձնարարել դասի բոլոր փուլերում ու հետապնդել տարբեր նպատակներ: Այսպես, մինչև նոր դասանյութի հաղորդումը առաջադրվող պրոբլեմ-առաջադրանքը նպատակ ունի աշակերտների ուշադրությունը կենտրոնացնելու ուսումնասիրվող նյութի շուրջը, նրանց մասնակից դարձնելու թեմայի կամ առանձին հարցերի պարզաբանմանը: Նման առաջադրանքը Ն.Գ. Դայրին անվանում է տրամաբանական:

Նոր գիտելիքների ամրապնդման ու տնային առաջադրանքների հանձնարարման փուլում առաջադրվող պրոբլեմային առաջադրանքները նպատակ ունեն զարգացնելու աշակերտների ուսումնական գործունեությունը ( նոր գիտափաստերի ու տվյալների յուրացում, լրացուցիչ աղբյուրների օժանդակությամբ թեմայի խոր ու համակողմանի ըմբռնում, ինչպես նաև հիշողության ամրացում ): Սակայն վերջինիս իրականացումը ամենից շատ կախված է աշակերտի վերաբերմունքից: Հայտնի է, որ ավելի հեշտ է ուսուցանել այն աշակերտին, ով մտադրված է հարստացնել իր գիտելիքները նոր

գիտափաստերով ու հասկացություններով, ունի ձգտում նորը իայտնագործելու " և ծարավ է գիտության: Ուստի, մանկավարժի գործունեության կարևորագույն բաղադրամասը նախ և առաջ աշակերտների մեջ ուսման նկատմամբ դրական վերաբերմունքի դաստիարակումն է, որն իրականացվում է տարբեր մեթոդներով ու հնարներով:

Դպրոցականների գործունեության ակտիվացման գործում հսկայական է ուսման նկատմամբ անհրաժեշտ դրդապատճառների դաստիարակման դերը:

Չենվելով դպրոցականների ուսման դրդապատճառների վրա, ուսուցիչը կարող է ուսուցման պրոցեսում իրականացնել ճանաչողական խնդիրների լուծման բազմազան հնարքներ: Օրինակ՝ աշակերտներին հրապուրելով ապագայի իդեալներով՝ հասարակությանը պիտանի լինելու գաղափարով, կարելի է բարձրացնել նրանց հուզական աստիճանը և ուսուցումը դարձնել շատ էական ու հետաքրքիր գործ: Չհետաքրքրություն կարող է առաջացնել այն ուսումնական նյութը, որը պարունակում է նորություն, աշակերտի համար առայժմ անհայտ է ու նրա մեջ առաջացնում է զարմանք: Վերջինս ճանաչողության հիմնական ազդակն է, նրա ելակետը:

Մտածողության պրոցեսի սկզբնական պահը սովորաբար պրոբլեմային իրավիճակն է: Ստեղծված պրոբլեմային իրավիճակից դուրս գալու համար աշակերտը դիմում է էմպիրիկ ու տեսական մտածողության ձևերին: Եթե պրոբլեմի լուծման առաջին փուլում նա դիմում է էմպիրիկ մտածողությանը, ապա եկրորդ փուլում տեսական մտածողությանը, փորձարարական տվյալների մանրակրկիտ վերլուծությունից անցնում է հետազոտվող օբյեկտի ներքին էական կողմերի բացահայտմանը, պատճառահետևանքային կապերի ու փոխկապակցությունների հայտնաբերմանը: Այսպիսով, մտածողությունը զգայությունից անցում է կատարում դեպի միտքը:

## **2.2 Պրոբլեմային ուսուցման կազմակերպումը ներառարկայական և միջառարկայական կապերի բացահայտման պայմաններում**

Միջառարկայական կապերը երևույթների և առարկաների օբյեկտիվ փոխկապակցություններ են, որոնք բացահայտվում են ուսուցչի և աշակերտի համատեղ գործունեության ընթացքում, ապահովում ուսուցման պրոցեսի արդյունավետությունը, գիտելիքների համակողմանի ու հաստատուն յուրացումը, զարգացնում սովորողների տեսական մտածողությունը, ճանաչողական ընդունակություններն ու հետաքրքրությունները:

Ներառարկայական են համարվում այն կապերը, որոնք ընկած են համանման ուսումնական առարկաների միջև: Դրանք միջառարկայական կապերի համեմատ ավելի նեղ հասկացություններ են և առանձին դեպքերում հանդես են գալիս որպես նաև միջառարկայական կապեր:

Միջառարկայական կապերն ընկած են երկու և ավելի առարկաների միջև: Դրանք տարածական իմաստով ավելի ընդարձակ են, քան ներառարկայական կապերը: Միջառարկայական կապերն ընդգրկում են տարբեր և մեծ մասամբ հարակից առարկաների փոխկապակցություններ:

Որպես եզրահանգում նշենք

1. Որևէ գիտության զարգացում պայմանավորված է մեկ այլ գիտության առաջընթացով: Ուրեմն, ուսուցանվող գիտելիքների միասնության ապահովումը անհնարին է առանց ներառարկայական ու միջառարկայական կապերի բացահայտման:

2. Ներառարկայական և միջառարկայական կապերի բացահայտման պայմաններում պրոբլեմային ուսուցման հիմնական մեթոդները կարող են լինել պրոբլեմային շարադրանքը՝ մասնակի որոնողականը և հետազոտականը:

3. Մեկ կամ մի քանի առարկաներից ստացած գիտելիքների օգնությամբ լուծվում է մեկ այլ առարկայից տրված պրոբլեմը:

4. Ներառարկայական և միջառարկայական կապերի պայմաններում պրոբլեմային ուսուցման կազմակերպման դեպքում ուսուցիչը պետք է՝ ա) ունենա ընդհանուր պատրաստականություն, լինի համակողմանի զարգացած անձնավորություն, բ) տիրապետի հարակից առարկաների միջև կապերի բացահայտման մեթոդներին. գ) իմանա ներառարկայական և միջառարկայական կապերի ձևերը և դրանց պայմաններում պրոբլեմային ուսուցման կազմակերպման եղանակները, դ) ձևակերպի պրոբլեմը և անհրաժեշտության դեպքում օժանդակ պրոբլեմների միջոցով

աշակերտներին նպատակամղի հիմնական պրոբլեմի լուծմանը, ե) հաշվի առնի աշակերտների տարիքային և բնական առանձնահատկությունները, գ) պրոբլեմային ուսուցման ժամանակ դիմի ուսուցման անհատականացմանը, ը) որոշի պրոբլեմի լուծման տեղը, տիպը և մեթոդները:

### **2.3. Պրոբլեմային հարցերը որպես աշակերտների ճանաչողական ակտիվության և ինքնուրույնության բարձրացման միջոց**

Պրոբլեմային հարցերը սովորաբար առաջ են գալիս պրոբլեմային իրավիճակի տարրերի վերլուծումից, իսկ պրոբլեմային իրավիճակն այն դժվարացնող կացությունն է, որն առաջ է բերում ճանաչողական հարց և դրան պատասխանելու համար՝ ակտիվ մտավոր գործողություն:

Խելացի կարգով պրոբլեմային իրավիճակի ստեղծումը աշակերտներին ստիպում է ակտիվ որոնումներ կատարել՝ երևույթների փոխադարձ կապերի, ազդեցությունների, նրանց միջև եղած պատճառահետևանքային կապերի հայտնաբերման համար:

Յուրաքանչյուր պրոբլեմային իրավիճակի ստեղծումը ենթադրում է ուսուցչի կողմից հարցերի այնպիսի շղթայի ստեղծում, որ աշակերտները մի հարցից մի այլ հարցին անցումը կատարեն աստիճանաբար՝ չիմացածից դեպի իմացածը, ոչ լրիվ գիտելիքներից դեպի լրիվ գիտելիքները:

Նախքան հարցի առաջադրումը, ըստ Մ.Ի. Մախմուտովի, հարկավոր է տեսնել այդ երևույթի երեք կողմերը՝ ա) հարցի նշանակությունն ուսուցման մեջ, բ) հարցի տիպը, որ օգտագործվում է ուսուցման պրոցեսում, գ) ուսուցչի հարցադրման արվեստը:

Այսպիսով, աշակերտի ճանաչողական ակտիվ գործունեության կազմակերպման գլխավոր միջոցը ուսուցչի կողմից ճանաչողական բնույթի հարցերի առաջադրումն է:

Մանկավարժությունից հայտնի են մի շարք տիպի հարցեր, որոնք օգտագործվում են առանձին դիդակտիկ նպատակներից ու պահանջներից ելնելով:

Հարցերը կարող են լինել՝ ա) հեռավոր կողմնորոշող, բ) ավելի որոշակի ուղղություն սովոր, գ) թելադրող, դ) հուշող:

Պրոբլեմային հարցերը, ի տարբերություն ինֆորմացիոն հարցերի, բովանդակում են դեռևս աշակերտների կողմից չբացահայտված ուսումնական հարցեր, որոնց մասին աշակերտը ինֆորմացիա չի ստացել:

Մ.Ի. Մախմուտովը պրոբլեմային հարցերում տեսնում է երեք հիմնական պայման:

Առաջին-Հարցը պետք է ունենա տրամաբանական կապ նախկինում յուրացրած գիտելիքների, պատկերացումների ու թեմայի հետ:

Երկրորդ-Անհրաժեշտ է, որ այդ հարցը բովանդակի ճանաչողական դժվարություն: Պրոբլեմային հարցի պատասխանը պայմանավորվում է մի շարք մտավոր գործողություններով:

Երրորդ-Հարցը պետք է կապված լինի աշակերտի էմոցիոնալ զգացմունքների հետ, առաջացնի իմացածի անբավականության զգացում:



Ավելացնենք, որ պրոբլեմային հարցի չորրորդ պայմանը ճանաչողական հետաքրքրությունն է:

Հարցերի միջոցով ուսուցիչը կարողանում է առաջադրել պրոբլեմներ, նշել դրանց լուծման հնարավորությունները: Մ.հ. Մախմուտովն այդ առիթով ուսուցիչներին ներկայացնում է չորս պահանջ.

1. Ուսուցիչը պետք է կարողանա ուսումնական որոշակի իրադրության մեջ առաջադրել այնպիսի հարցեր, որոնք աշակերտներից պահանջում են հիշողության մեջ հերթականորեն վերականգնել նախկին գիտելիքները, ի հայտ բերել փաստեր, որոնք հնարավոր է օգտագործել նոր իրադրության մեջ:

2. Հարցը պետք է պահանջի ոչ թե վերարտադրող, այլ ստեղծագործական պատասխան, որն աշակերտներին մղում է ինքնուրույն մոտեցման փաստերի ու երևույթների նկատմամբ:

3. Հարցը պետք է աշակերտի միտքն ուղղի քննարկվող փաստերի, երևույթների և առարկաների կողմը:

4. Հարցը պետք է առաջադրել այնպես, որ այն աշակերտին ստիպի փաստերին ու երևույթներին նայել կապերի մեջ, տեսնել երևույթը և առարկան ոչ միայն մասերով, այլև ամբողջությամբ:

Ընդհանրացնենք.

1. Հարցերը դասի բոլոր փուլերում ծառայում են որպես գլխավոր միջոց, որոնց շնորհիվ ապահովվում է աշակերտների ճանաչողական ակտիվությունն ուսուցման պրոցեսում:

2. Միայն ճանաչողական բնույթի հարցերը կարող են աշակերտներին մղել ակտիվ, ինքնուրույն մտավոր գործողությունների:

3. Առաջադրվող յուրաքանչյուր հարց պետք է ունենա հետևյալ պայմանները. ա) սուբյեկտի և օբյեկտի տրամաբանական կապը, բ) ճանաչողական որոշակի դժվարության բովանդակումը, գ) կապը սովորողի էմոցիոնալ զգացմունքների հետ, դ) հետաքրքրության առաջացումը և սովորողների նպատակամղումը մտավոր գործողությունների:

4. Ուսուցիչը պետք է տիրապետի հարցադրման արվեստին:

## Եզրակացություններ

Պրոբլեմային ուսուցումը մի եղանակ է, որը հենվում է գիտելիքների յուրացման օրինաչափությունների և ուսուցման մեթոդների յուրակերպ համակցման վրա: Այն, որպես պրոբլեմային իրավիճակների տարրերի վերլուծության արդյունք, նպատակամղվում է առաջացած հակասությունների ու դժվարությունների հաղթահարմանը, դպրոցականների տրամաբանական մտածողության զարգացմանը, բարձրացնում է նրանց ճանաչողական ակտիվությունը, նրանց մեջ առաջացնում առարկայի, երևույթի, օբյեկտի նորը, անհայտը, ներքին կապերը, կառուցվածքները հայտնի գիտափաստերի միջոցով բացահայտելու բուռն ցանկություն, որն իրականացվում է մասնակի որոնողական, հետազոտական, պրոբլեմային շարադրանքի մեթոդների կիրառմամբ:

Պրոբլեմային ուսուցման նպատակն է՝ սովորողներին հաղորդել ոչ միայն գիտական գիտելիքներ, առավելագույն չափով զարգացնել նրանց իմացությունը, այլև նրանց սովորեցնել տիրապետելու մտավոր ստեղծագործական ինքնուրույն գործողությունների նոր միջոցների, որը ամենակարևորն է:

Ուցումը պրոբլեմային եղանակով վարելու դեպքում աշակերտի յուրացումը՝ ընկալումը, իմստավորումը, ամրապնդումը և կիրառումը անհամեմատ կայուն է, խոր և հաստատուն, քան, ուսուցման ավանդական մեթոդների գործադրման ժամանակ:

Պրոբլեմային ուսուցումն ունի մի շարք առավելություններ.

1. Այն ուսուցչի և աշակերտի միջև ստեղծում է ուսումնական նոր հարաբերություններ, ուր առավելագույն չափով դրսևորվում է հատկապես աշակերտի ակտիվությունը:
2. Աշակերտներին մասնակից է դարձնում նոր դասանյութի հաղորդմանը, նրանց ստիպում կատարելու մտավոր գործառնություններ:
3. Դպրոցականների ձեռք բերած գիտելիքները խորացնում ու կայունացնում է, որում, վերածում համոզմունքների, դրանք կյանքում օգտագործելու լայն հնարավորություններ է ընձեռում:
4. Ուսուցման այս եղանակը դաստիրակում ու զարգացնում է աշակերտների հոգեբանական որակները, ձևավորում նրանց ինքնուրույնությունն ու ակտիվությունը, զարգացնում նրանց ստեղծագործական նախաձեռնությունները, բարձրացնում պատասխանատվությունն ու աշխատասիրությունը:
5. Այս եղանակը նպաստում է նաև ուսուցչի մտավոր կարողությունների զարգացմանը:

## Առաջարկություններ

Դեռահասի համար պրոբլեմային ուսուցում կազմակերպելիս պետք է ելնել հետևյալ կարևոր պայմաններից. ա) նրա ուսումնական գործունեության առանձնահատկություններից, բ) նրա տեսական մտածողության մակարդակից, գ) ուսումնական նյութի բովանդակությունից, դ) միջառարկայական կապերի բացահայտման հնարավորություններից:

Ելնելով պրոբլեմի բարդությունից դեռահասը կարող է լուծել՝ ա) վարժողական (ինֆորմացիոն), բ) ալգորիթմական բնույթի պրոբլեմներ և գ) պրոբլեմներ, որոնք լուծվում են ուսումնական նյութի մեկնաբանման միջոցով:

Պրոբլեմային ուսուցումը մանկավարժական մտքի պատմության մեջ մեծ նվաճում է, սակայն տեսությունն ու պրակտիկան դեռևս պահանջում են հետևողական ուսումնասիրություններ ու հետազոտություններ: Ենթակա են հետազոտման հատկապես հետևյալ հարցերը.

ա) պրոբլեմային ուսուցման

յուրահատկությունները առանձին առարկաներից՝ առանձին դասարաններում,

բ) պրոբլեմային ուսուցման կազմակերպումն արտադասարանական աշխատանքների պրոցեսում,

գ) պրոբլեմայնությունը և ուսուցման անհատականությունը,

դ) կիրառելիության և պրոբլեմային ուսուցումը և այլն:

## Օգտագործված գրականության ցանկ

1. Յո.Ա. Ամիրջանյան – Պրոբլեմային իրավիճակները ուսուցման պրոցեսի ակտիվացման միջոցներ:
2. Ի.Դ. Անդրեւ - Գիտական ճանաչողության մեթոդների մասին:
3. Լ.Գ. Վյատկին – պրոբլեմային ուսուցման մեթոդիկան:
4. Ի.Տ. Ինդիլյան – Ուսուցման մեթոդիկա:
5. Գ.Գ. Զարամյան – Դասերի կատարելագործման հարցերը:
6. Վ.Ն. Մաքսիմովա – Ուսուցման նկատմամբ պրոբլեմային մոտեցումը դպրոցում:
7. Ա.Ս. Մատյուշկին – Ուսուցման և մտածողության մեջ պրոբլեմային իրավիճակները:
8. Մ.Ի. Մախմուտով – Պրոբլեմային ուսուցումը:
9. Մ.Ի. Մախմուտով – Պրոբլեմային ուսուցման հարցերը դպրոցում:
10. Մ.Ի. Մախմուտով – Պրոբլեմային ուսուցման տեսությունը և պրակտիկան:
11. Մ.Ի. Մախմուտով – Պրոբլեմային ուսուցման գործընթացի կազմակերպման հարցերը:
12. Վ.Պ. Մուրադյան – Ուսուցման գործընթացում հարցերի և առաջադրանքների դերը:
13. Տ.Ի. Շամովա – Ուսուցման մեջ պրոբլեմային մոտեցումը:
14. Լ.Ս. Հովհաննիսյան – Պրոբլեմային ուսուցման մի քանի առանձնահատկությունները: